ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Հայկական պետականության հաստատմամբ, Բագրատունիների գահակալության համեմատաբար խաղաղ պայմաններում բազմաթիվ շինարարական աշխատանքների հետ մեկտեղ զարգանում է նաեւ ջրաշինությունը: Ունենալով ջրային սակավ պաշարներ՝ Հայաստանի տարբեր շրջաններում անհրաժեշտություն է դառնում ջրային շինությունների կառուցումը: Ջրաշինական կառույցների՝ ջրանցքների, աղբյուրների, ջրամբարների, ջրաղացների եւ այլ շինությունների մասին բազմաթիվ վկայություններ կան հայկական վիմագրերում: Վերջիններիս վերաբերյալ արձանագրություններ ունենալու հանգամանքը, դեռեւս Ե դարում հաստատում է պատմահայր Մովսես Խորենացին: Ինչպես նշում է Ս. Բարխուդարյանը. «Ավանդաբար Շամիրամին վերագրելով ուրարտական շրջանից մնացած բոլոր հուշարձանները, այդ թվում նաեւ Վան քաղաքի եւ Վանի (Շամիրամի) ջրանցքի կառուցումը, պատմագիրը Վանի մոտ գտնվող ժայռի վրայի սեպագիր արձանագրությունները համարում է այդ հսկա շինությունների առթիվ գրված հիշատակագրություններ»[1]: Խոսելով Շամիրամի՝ Այրարատում մի շարք շինարարություններ կատարելու մասին՝ պատմահայրը նշում է, որ «...հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք եւ մեծամեծ վիմօք շինել, կրով եւ աւազով մածուցեալ, անբաւ լայնութեամբ եւ բարձրութեամբ...», ապա «...զամենայն երեսս քարին իբրեւ գրչաւ գմոմ հարթեալ՝ բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ»[2]: Փաստորեն, քարաժայռի սեպագիրը Խորենացին համարում է Շամիրամի կառուցած ջրանցքի «վկայագիրը», մի երեւույթ, որը լայն տարածում էր ստանում ԺԱ-ԺԴ դարերում՝ պայմանավորված Հայաստանի ընկերային-տնտեսական ու մշակութային առաջընթացով: Նման պայմաններում զարգանում ու հարստություն էին ձեռք բերում նաեւ վանական միաբանությունները, որոնց տրվում էին տարաբնույթ անշարժ եւ շարժական գույք՝ փոխարենը նվիրառուից ստանալով հիշատակության օրեր՝ նվիրատուի կամ նրա հարազատների հոգու փրկության համար: Մինչ վանքերում կատարվող ջրաշինական աշխատանքներին անցնելը, նշենք, որ հայկական թվականություն գործածած առաջին արձանագրությունը գրված է հայոց ՄԼԲ(783 թ.), ուր խոսվում է Ուխտատուր վանականի եւ իր եղբայր Տոտլիկի կողմից Թալինի համար Սարկապատու դաշտից աղբյուրի ջուր բերելու մասին[3]:

Բազմաթիվ վանքերում գերխնդիր է դառնում ջրի հարցը, որի պատճառով վերջիններիս տարածքում կառուցվում էին առանձին աղբյուրներ, ջրամբարներ կամ դրանք ստանում էին նվիրատվությունների միջոցով: Այս առումով նշանավոր է Հաղբատավանքի առաջնորդ Հովհաննեսի անձնական միջոցներով 1258 թ. կառուցված աղբյուրի շինությունը (տե՛ս նկ.1), որի կենտրոնական կամարի վրա փորագրված շինարարական արձանագրությունն

1 «Դիվան հայ վիմագրության», պրակ I, կազմեց Հ. Ա. Օրբելին, Եր.,1966, էջ XVI:
2 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս,1913, էջ 52-54:
3 Տե՛ս **Ղեւոնդ Ալիշան**, Այրարատ, Վենետիկ,1890, էջ138-139:

ավարտվում է այսպես. «...որում ողորմեսցի Ք(րիստո)ս [տալով հոգոյ նորա ի լուսեղէն] յարկաց եւ անմահական ջրոյն. ամէն»[4], իսկ մեծ գավթի մեկ այլ արձանագրության մեջ նշվում է, որ Զաքարե ամիրսպասալարի կողմից վանքին երկու գյուղ է տրվել իրենց «...հողով եւ ջրով, խոտամարգերով, մայրիւք եւ ջաղացովք, գոմաղ/րիւ, եւ լերամբ եւ դաշտով...»[5]:

Աղբյուրի շենք կա նաեւ Սանահին գյուղի արեւմտյան կողմում, ուր ջուրը գալիս է սարալանջից՝ քարաշեն գետնուղիով: Շենքի արեւմտյան պատին փորագրված է կառուցման արձանագրությունը. «ՔՍ ԱԾ ողորմի Մխիթար/ քահանաի Ճ սպ եւ յաւազանս/ ՉԴ թվիս» (1255 թ.): Ավազանի եւ աղբյուրի տարբերակման շուրջ Կ. Ղաֆադարյանը տալիս է որոշակի բացատրություն, ըստ որի՝ «Աղբյուր ասելով հասկացել են ամբողջը, սկսած ակունքից մինչեւ գյուղում կառուցված աղբյուրի շինությունը, ներառյալ նաեւ ջրատար խողովակները, իսկ ավազանը միայն աղբյուրի համար գյուղում շինած շենքն էր»[6]: Նշենք, որ Հաղբատի եւ Սանահնի վանքերն ունեին հինգ հարյուրից ավելի միաբան, հետեւաբար նման վանքերի համար ջրի առկայությունը մեծ կարեւորություն ուներ:

Վանքերը ջրով ապահովելու, ջրատար անցկացնելու, ջուրն «ազատ շնորհելու» մասին մի քանի տեղեկություններ կան նաեւ Անիի վիմագրերում: Այսպես, Մայր տաճարի արեւելյան պատի մի վիմագրում կարդում ենք, որ ոմն Առաւն մագիստրոս բարձրացնելով «...զպարի/սպ սորին կառկառակոյտ արձանաւք եւ հաստահեղոյս ամրութեամբ...», անցկացնում է նաեւ «...ջուր յորդաբուխ ի մէջ ամրոցիս յուրախութիւն եւ ի զովացումն ծարաւեաց...»[7], կամ Տիգրան Հոնենցի եկեղեցու արեւելյան պատի արձանագրությունը, ուր նշվում է Տիգրանի՝ վանքը ջուր բերելու մասին, որը «...խաղտել էր/ ու կտրել...» եւ որն էլ հետագայում ոմն Մաթեոս, իր կնոջ Սթենիի եւ եղբայր Մարկոսի հետ «...վասն արեւշատութե(ան) պար/ոն Շահնշի եւ Խուանդզին եւ իրենց/ որդուն Զաքարի եւ վասն մեր հոգուս յիշ/ատակ բերաք ջուրս եւ հաստատեցաք...»[8]: Մեկ այլ արձանագրության մեջ, որ գտնվում է Աբլղարիբ Պահլավունու (Ս. Փրկիչ) եկեղեցու մուտքից դեպի արեւմուտք, խոսվում է եկեղեցու սպասավորներին Պետրոս Գետադարձ Կաթողիկոսի կողմից մի շարք տիրույթների հետ «...:Գ: (3) աւր ջուր ազատ ի խալաէ եւ ի գեղջէ յամենայն հասուց...» շնորհելու մասին[9]:

Նվիրատվությունների շարքում առանձնակի ուշադրության են գրավում ջրային կառույցների ու ջրօգտագործման հետ կապված որոշ եզրույթներ, որոնք առկա են ոչ միայն վանական շինությունների որմերի, այլեւ միջնադարում լայն տարածում գտած խաչքարերի արձանագրություններում: Այդ արձանագրություններից տեղեկանում ենք, որ ջրօգտագործման դիմաց հարկ է գանձվել, որը միջնադարյան սկզբնաղբյուրներում կոչվել է «Աբգան» կամ «Աւգան»: Ինչպես նկատում է Ս. Բարխուդարյանը, բառը պարսկերեն է եւ արմատն է Աւ կամ Աբ, որը իրանիերենում ճիշտ այդ երկու ձեւով է գործածական եւ երկու դեպքում էլ նշանակում է ջուր. բառի երկրորդ մասը **գան** ածանցն է, որը իրաներենում **գանէ, անէ**

4 **Կ. Ղաֆադարյան**, Հաղբատ, Եր.,1963, էջ 238-239, արձ.147:

5 Անդ, էջ169, արձ 37:

6 **Կ. Ղաֆադարյան,** Սանահնի վանքը եւ նրա արձանագրությունները, Եր.,1957, էջ185, արձ.177:

7 «Դիվան, պրակ I», Եր., 1966, էջ 38, արձ.107:

8 Անդ, էջ 64, արձ.189:

9 Անդ, էջ 48, արձ.135:

ձեւն ունի, հետեւաբար Աբիգանէ կնշանակի ջրային, ջրի համար տրվող վարձ կամ տուրք[10]: «Աբգանի» մասին վիմագրերում հիշատակություններ կան ոչ միայն ջրահարկ վերցնելու, այլեւ վերջինից ազատելու մասին: Այսպես, Մարց գյուղի (Թումանյանի շրջան) «Ճգնավորի թալա» վայրի մի խաչքարի արձանագրության մեջ ոմն Թաճեր ազատում է Դեղձուտը «աբգան» ջրի հարկից. «...որ տվի իմ բաժնայ գեղիս Դեղծուտիս, որ այլ աբգան չառնու ոչ ով», կամ Դսեղի Է դ. հայտնի կոթողի ԺԳ դ. արձանագրությունը, ուր խոսվում է գյուղը աբգանից ազատելու մասին. «Ես Վահրամ Ջաւտարշին աբգանն թողի...», իսկ Լոռու Ազատկաձոր (Իգատակ) գյուղը աբգանից 1236 թ. մի խաչքարի արձանագրությամբ ազատում է Համազասպյան Գրիգոր իշխանը. «Ես Գրիգոր որդի Մա/ րծպանա թողի զԱ/ զաղակաձորոյս զ/ աբգանն ...»[11]:

Ջրօգտագործման ոլորտին է առնչվում նաեւ Վանեվանի մի արձանագրություն, ուր ասվում է, որ սպարապետ Շապուհ Բագրատունին, իր քրոջ՝ Սյունյաց Մարիամ իշխանուհու հետ կանգնեցնում է «...վիմատաշ/ կոփածովք, շատածախ գանձիք եւ մեծաջան վաստակովք...», ինչպես նաեւ վանքին նվիրաբերում են «...:Դ: գեղո սահման՝ Կոթաքար, Շաւառնահոլն, Գետամեջն, Կթանոց, Գետավանաց ծովն...»[12] (Գր. Գրիգորյանի աշխատության մեջ նշված է. «...եւտու հինգ գեղոց սահման, Կոթաքարն, Աղաբոյվանսն, Շավառնահոլն, Գետամէջն, Կթանոցն, Գետավանաց ծովն...»), ուր «Գետավանաց ծով»-ի երկրորդ բաղադրիչը հուշում է, որ գործ ունենք ջրային որեւէ շինության հետ (լիճ, ջրամբար): Արձանագրության «...ի Կարբին գե/տերէն եւ նաւերէն» արտահայտությունը ենթադրել է տալիս, որ խոսքը գետերէն-ջրանցքների եւ նաւերէն-ջրաղացների մասին է: Այժմ վերջիններս քննենք առանձին-առանձին:

Հոգեւոր հաստատություններում ջրանցքաշինությունը զարգանում է հատկապես Ժ-ԺԳ դդ.: Այն ունեցել է զարգացման տարաբնույթ ձեւեր՝ կապված ոչ միայն կլիմայական պայմանների, այլեւ աշխատավորների շահագործման ձեւերի հետ: Բանն այն է, որ միջին դարերում վանքերն իրենց մեծ կալվածքներով եւ տնտեսությամբ կազմում էին շահագործման նույն տիպը, ինչ-որ աշխարհիկ ավատատերերը: Վերջիններս ջրանցքների միջոցով կրկնապատկում էին գյուղացիների կողմից մշակվող իրենց հողերից գանձվող հարկը, ապա խոպան հողերը, որոնք ոչ մի եկամուտ չէին բերում, ոռոգման շնորհիվ դառնում էին մշակելի, հետեւաբար՝ հարկադրման ենթակա: Անհատական միջոցներով կառուցված ջրանցքները շահույթի աղբյուր լինելով՝ դառնում էին տվյալ անհատի (հոգեւորական, աշխարհիկ ավատատեր) սեփականությունը, որը օժանդակ միջոց էր նոր հողերի յուրացման կամ արդեն յուրացված հողերի բերքատվությունը բարձրացնելու առումով[13]: Երբեմն ջրի պակասի հետեւանքով հոգեւոր հայրերը չէին կարողանում բավարարել իրենց ցանկությունը: Այսպես, Սյունյաց Հակոբ եպիսկոպոսը 932 թ. Փիլիպե գահերեց իշխանից 12000 դրամով գնում է ներկայիս Գորիսի ենթատարածքի Վերին Շեն գյուղի մերձակա Ակներ կոչված վայրից բխող Վարարակ աղբյուրների ջրերը եւ կառուցում 29 կմ երկարություն ունեցող Վարարակի

10 «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության եւ գյուղացիության պատմության», հ. I, Եր.,1964, էջ 276:
11 «Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները.IX-XIII դարերի խաչքարերը», Եր., 1984, էջ 55:
12 « Դիվան հայ վիմագրության», պրակ IV, կազմեց Ս.Գ.Բարխուդարյանը,Եր., 1973, էջ121-122, արձ.491:
13 «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության եւ գյուղացիության պատմության, հ 1, Եր.,1964, էջ 259-283:

ջրանցքը: Այն հետագայում վերանորոգում է տեր Հովհաննեսը, որի առթիվ ժայռաբեկորի վրա, որից սկիզբ է առնում Վարարակը, փորագրում է. «... ԹՎ :ՉԻՍԳ:(1294թ.): Ես ՏՐ Յոհանէս կաման ԱՑ եւ աղաթիւք հոգեւոր հայր իմո ՏՐ Հայրապետս տարա զջուրս Վարարական ի Վարդուտն...»[14], կամ Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է, որ Գնդեվանքի վանահայր Սարգիսը 1008 թ. վանքի կալվածքները ոռոգելու նպատակով ջուր է բերում. «ի լեռնէն, ի մեծ դիպաւոր սարէն, ուր ակունքն են քաղցրահամ գետոյն, զոր Ձկնարած կոչեն»[15]: Վանքերի առաջնորդներն արգելում էին գյուղացիներին օգտվել վանքապատկան ջրանցքներից ու առուներից, քանզի արհեստականորեն հանված ջուրը կազմում էր նաեւ վանքերի սեփականությունը: Որոշակի քանակությամբ ջուր էր հատկացվում այն վանքերին, որոնք չունեին սեփական ջրանցքներ ու առուներ: Այդ է պատճառը, որ վանքերը հիմնականում կառուցվում էին լճերի, գետերի ու առուների մոտ, երբեմն էլ ուղղակի ակունքների վրա[16]: Պատահական չէ, որ Գյուտա վանքը, դեռեւս Ե դարում կառուցվել է Երասխ գետի վրա, Ձախրլու գյուղի հին եկեղեցին՝ Ս. Բեթղեհեմը, շինված է մի հորդահոս աղբյուրի վրա, որի ջրերը հոսում են եկեղեցու տակով, Ամաղուի ձորում գտնվող Փոկաս Հայրապետի անունը կրող եկեղեցու միջից բխում էր մի բարակ աղբյուր, Վահանավանքը Տիգրանասարի ակունքներից դեռեւս Ժ դարում ապահովվել է մինչ օրս գործող աղբյուրի ջրով:

Պրոֆ. Խ. Սամուելյանը, նաեւ Ս. Բարխուդարյանը, ելնելով Մխիթար Գոշի «Դատաստանագրքի»՝ «...զի հող միայն է թագաւորի եւ իշխանի, եւ ոչ ջուր» ձեւակերպումից, ինչպես նաեւ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» այն ցուցումից, թե ամեն ոք իրավունք ունի առուներ հանելու եւ անցկացնելու իր ցանկացած տեղը, հանգում են մի եզրակացության, որ ջրի իրավունքը պետության առանձնաշնորհությունն էր, կրում էր հանրային բնույթ եւ պետության սահմաններում համարվում էր սոսկ օգտագործման իրավունք[17]:

Ինչ վերաբերում է նաւ (նով) բառեզրին, որը մի քանի անգամ հիշատակվում է վիմագրերում (հիմնականում նվիրատվական), ենթադրում է ջրանցքներ ու ջրաղացներ հասկացությունը, որը հաստատվում է նաեւ հայերեն բացատրական ու արմատական բառարաններով: Այսպես, հայերենի դասական բառարաններից տեղեկանում ենք, որ նաւ նշանակում է քարե աման, աւազան, տաշտ[18], ինչպես նաեւ ջրաղացի փայտեայ խողովակը, որով ջուրը մեծ թափով իջնում է եւ պտոյտ տալիս ջրաղացաքարի անիւը[19], իսկ ըստ արմատական բառարանի՝ նաւ- աւազան, տաշտ, որը հնդեւրոպական նախալեզվի naus - «նաւ» արմատից է, եւ որի հոմանիշներն են պահլավերեն՝ navicak- «ջրանցք», պարս- կերեն՝ nav, navda n- «նաւակ, ջրանցք», քրդերեն՝ nav- «նաւակ, մակոյկ, ջրանց, խո- ղովակ»[20]: Նվիրատվական արձանագրություններում առանձնակի տեղ են զբաղեցնում ջրաղացների (նաւերի) հետ կապված որոշակի հարցեր, քանզի վերջիններս, ունենալով հաստաթաբեր կարեւորություն, նվիրաբերվում կամ վաճառվում էին այս կամ այն վանքին, եկեղե-

14 «Դիվան հայ վիմագրության», պրակ II, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան,Եր.,1960, էջ41, արձ. 229:

15 «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 191:

16 **Գ.Ա. Մ. Գրիգորյան**, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Եր., 1973, էջ113-116:

17 «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության եւ գյուղացիության պատմության», հ. I, Եր., 1964, էջ 271-273:

18 «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 610:

19 «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հատոր III, Եր., 1944, էջ 444:

20 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Եր.,1977, էջ 433:

ցուն՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն: Սեփական ջրաղացներն անվանվել են «տնաջաղաց», «ազատաղաց», որոնք ենթադրում են տվյալ ջրաղացից ոչ միայն վանական եղբայրության անդամների, այլև հասարակ գյուղացիների ազատորեն օգտվելը: Օրինակ, Լեռնային Ղարաբաղի Կոշիկ անապատի սրահի մի վիմագրում ասվում է. «...ես Դեսում, որդի Սիսաքին, ամու/սին իմ Մամա միաբանեցաք ՍԲ ուխ/տիս եւ տվաք ՍԲ Գերգա ի մեր հայրենեց նովս... ածէրածու ՍԲ Գերգ ի մեր տնաջաղաց իր հող ի խոշուրլարէն, ու գ/ձկնավազն...»[21], իսկ Գորիսի Տանձատափի գյուղում Գրիգոր վարդապետը գնում է «...գհուն/երո ջաղաց ի հալալ արդեանց իմոց եւ եղու ընծա/ ՍԲ ԱԾաձնիս»[22] կամ Գանձասարի վանքի գավթի հյուսիսային պատին. «...?Շահն?շէս որդի Աղ?պու/ղ?ին, վերին նովերին ?հողն տվի ի ԱԲ? ուխտս ?Գանձասարայ?...», ինչպես նաեւ Քիլիսալու գյուղի աղբյուրի գուռի վրա՝ «Յիշատակ է նովս Ամիր/ճանին, Աիբխանին, Ախիճանին»[23]:

Հիշարժան է հատկապես եկեղեցիներում միլերի կառուցումն ու նվիրաբերումը, որի վառ օրինակներ են Աբլղարիբ Պահլավունու Անիի Ս. Փրկիչ եկեղեցու արձանագրությունը, ուր վերջինս եկեղեցուն տալիս է «...կուղպականի :Գ: եւ ձի/?թիաց?/եւ այգի եւ հողեար», ինչպես նաեւ «...կանգնեցի միլ առ ?ՍՈՒՐԲ Փ?ՐԿՉԻՍ»[24], կամ Տիգրան Հոնենցի եկեղեցու արձանագրությունը, որտեղ մի շարք նվիրատվությունների շարքում նշվում է. «...ի քաղաքիս հայրենիք բաղնիսն ու միլն»[25], ուր միլն ըստ արմատական բառարանի բացատրվում է մլաւոր- «միլ կամ իլ ունեցող (ջրաղաց), ինչպես նաեւ մուլ արմատից՝ մլաղաց (ջաղացպան, ջաղացք)[26]:

Միլ եզրույթին անդրադարձել է նաեւ Ս. Ավագյանը: Իր բառաքննությունների շարքում առանձին բառահոդվածով նա քննության է առնում նշյալ եզրույթը: Ուսումնասիրելով Բրոսեի, Մ. Էմինի, Գ. Բասմաջյանի, Ն. Մառի, Հր. Աճառյանի եւ այլոց՝ բառիս քննությունները, Ավագյանը բերում է հետազոտողներին անհայտ մնացած մի վկայություն, որը գտնվում է Օձունի Ջ-Է դդ. տաճարից փոքր-ինչ հյուսիս կանգնած խաչքարի արձանագրության մեջ՝ փորագրված ոմն Գունդեխի կողմից (1228 թ.): Ըստ վիմագրի. «Ես՝ Գունդեխս իմ որաէքն բերի զմիլս, շինեցի հոգեդունս, կանգնեցի զիաչս վասն յերկար կենդանութեն ամիրսպասալար Շահնշահի եւ յիշատակ որդո իմո Կանանչին», որին հետեւում է նզովքի բանաձեւը: Փաստորեն, Անիի երկու արձանագրություններին Ավագյանն ավելացնում է Օձունի խաչքարի արձանագրությունը, որոնք լրացնելով միմյանց՝ ցույց են տալիս միլ բառի՝ աղբյուր-ջրուղի, ջրատար, ավազան կամ վերգետնյա կառույց լինելու փաստը: Ն. Մառը միլ-ը կապում է վրացերեն mili բառի հետ, որը նշանակում է ջրուղի, ջրատարի կառուցվածք, իսկ Լ. Մսերյանցը, դեռեւս ԺԹ դարի վերջին, եկել է այն եզրակացության, որ հայերեն միլ, վրացերեն mili բառերի համար իբրեւ նախաձեւ է համարվում ուրարտական սեպագրերի pili ձեւը, որ նշանակում է ջրանցք, ջրուղի: Նկատելի է, որ ուրարտերեն pili-ջրանցք բառը հայերենում

21 «Դիվան հայ վիմագրության», պրակ V, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, Եր.,1982, էջ 28, արձ. 57:
22 «Դիվան» , պրակ II, էջ41, արձ. 96:
23 «Դիվան», պրակ V, էջ 58, 226, արձ. 146, արձ. 807:
24 «Դիվան», պրակ I, էջ 44-45, արձ.126:
25 Անդ , էջ 63, արձ.188:
26 **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Եր.,1977, էջ 3 21:

իմաստային լայնացման հետևանքով ստացել է ոչ միայն ջրանցքի, ջրուղու, այլև ջրատարի, վերգետնյա կառույցի նշանակություն[27]:

Հարկ է նշել, որ ջրանցքների, առուների, գետերի ակունքներում, ժայռաբեկորների վրա խաչքարեր են կանգնեցվել, որոնց վիմագրերով հաստատվում է ջրերի անցկացումը խաչով հաստատելու քրիստոնյաների սկզբունքը: Օրինակ, Եղեգնաձորի Գյոմուր գյուղի մոտ, ձորի միջի աղբյուրի գլխին կանգնած է խաչքար, որի արձանագրությունը հաղորդում է, որ Պապաքի եւ Ամիր Հասանի իշխանության օրոք, ոմն Սարգիս եւ իր որդի Պետրոսը շինել են այս աղբյուրը եւ որպես հիշատակ դրա, խաչքար են կանգնեցրել՝ 1288 թ.[28]: Խաչքարեր են կանգնեցվել նաեւ ջրի օգտագործման կարգի, օրերի բաշխման եւ այլ առիթներով գանազան գյուղերի եւ մարդկանց միջեւ ծագած վեճերի ժամանակ, որոնք լուծվել են աշխարհիկ եւ հոգեւոր ֆեոդալների միջամտությամբ՝ վանքերի եւ խաչքարերի վրա արձանագրելով համապատասխան որոշումներ: 867թ. նման վեճ է ծագած եղել Արուճ եւ Կոշ գյուղերի միջեւ, որի մասին Արուճի եկեղեցու որմին կա արձանագրություն. «...ես Գրիգոր որդի Վառամա ծառա Ս/մբատա Բագրատունո եկի հրամանաւ Սմբատա եւ ես/ հաւասարեցի զջուրն ընդ Կոշ եւ ընդ յԱրուճ, զին/ չ իրեանց բնիկ ռասմ էր լել :Ա: եւ կէս Կոշա եւ :Ա: Արճ/ռ...»[29]: Վերջինս ավարտվում է նզովքի բանաձեւով: Ջրի համար վեճ է ծագել նաեւ 1036 թ. Տեկորի եւ Ազարակ գյուղերի միջեւ, ինչպես նաեւ 1173 թ. Ջրվեժում, որի ժամանակ սպանվում է ոմն Խաչատուր՝ երիտասարդ հասակում: Նրա սպանության վայրում կանգնած է մի խաչքար (տե՛ս նկ.2), որի վերաբերյալ կան մի շարք ավանդություններ: Դրանցից մեկի մասին խոսում է Ս. Բարխուդարյանը: Ըստ այդ ավանդության, որ պատմել է գյուղի ծերունիներից մեկը, գյուղի անունը ոչ թե Ջրվեժ է, այլ Ջրվեճ: Լինելով սակավաջուր՝ ջրի վեճերը գյուղում հաճախակի են եղել: Հարեւան Զորաղբյուր գյուղի բարակ աղբյուրը հետազոտելով պարզել են, որ ակունքները մաքրելուց հետո ջուրը կբավականացնի երկու գյուղերին էլ: Աշխատանքներն ավարտվում են, բայց ջուրը չի բավարարում երկու գյուղերին: Սկսվում է վեճը, եւ որոշվում է, որ այն գյուղը, որն առաջինը զոհ կմատուցի աղբյուրի գլխին, իրավունք կունենա առաջինը օգտվել աղբյուրից: Քանի որ Զորաղբյուրի անասուններն ավելի մոտ էին աղբյուրի ակունքին եւ հեռվից արդեն գալիս էին զոհի ոչխարով, ուստի աղբյուրի գլխին կանգնած ջրվեժցի կտրիճներից մեկը դուրս է քաշում իր դաշույնը ու կտրում իր վիզը, ասելով.«Թո՛ղ ես զոհ դառնամ մեր գյուղի համար»[30]:

Մ. Սմբատյանցը արտագրել է մի տապանաքարի հետեւյալ արձանագրությունը. «Այս է տապանս Խաչատուրի, որ սպանաւ ի վերայ ջրիս Ջրվէժո... թվին :ՌԻԲ:» (1573 թ.): Ըստ Ս. Բարխուդարյանի վերծանության. «Այս տուն սգո...[Խաչատրի, որ սպանաւ/ ի վերա ջրի Ջրվիժո-կիսաւրեա եւ ի յաշխարհէ/ եւ եթող կսկի/ծ ծնողաց իմոց. որք երկրպագէք ՍԲ Նշանիս յիշեսջիք ի ՏՐ / թ[վին] :ՌԻԲ:» (1173 թ.)[31]: Արձանագրությունը հստակ կերպով կապվում է վերը պատմածի հետ, ըստ որի տապանագրում հիշատակված Խաչատուրը ոչ այլ ոք

27 Տե՛ս **Ս. Ա. Ավագյան,** Վիմական արձանագրությունների բառաքննություն, Եր., 1978, էջ 203-207:

28 Տե՛ս **Ս. Բարխուդարյան**, Միջնադարյան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Եր., 1963, էջ 132:

29 «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության եւ գյուղացիության պատմության», հ. I, Եր., էջ 274:

30 **Ս. Բարխուդարյան**, Միջնադարյան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Եր., էջ 134:

31 Անդ:

է, եթե ոչ Ջրվեժի ջրի համար զոհված երիտասարդը: Սմբատյանցի վերծանած ՌԻԲ(1573) թվականը Ս. Բարխուդարյանը վերծանում է ՌԻԲ(1173), որը համոզիչ է: Տապանագրերի առումով եզակի օրինակ կարելի է համարել Իշխանավանքի գերեզմանատան օրորոցաձեւ տապանաքարը (տե՛ս նկ.3), որի վիմագիրը մեջբերում ենք ամբողջությամբ. «Այս է հանգիստ Աթաղ?ն?տիլին, որդոյ Աւանին, որ թերի հասակաւ փոխեցաւ ի ՔԱ. լասէ չստով ի նաւ մտանելով, ըստ ?մեղ?աց մերոց եղեւ ալեկոծում ի ծովին, եւ մեռ?աւ? ի ջուր, եւ սուգ անմխիթար է ծն?ող?աց իւրոց. ով կարդէք յիշեցէք ի ՔՍ. ԹՎ :ԾՂ:» (1141 թ.)[32]: «Ալեկոծում ի ծովին» արտահայտությունը հուշում է, որ այստեղ նաւ-ը փոխադրամիջոց է, եւ ոչ ջրաղաց. բացի այդ արձանագրությունն առանձնանում է մահվան հանգամանքների ինքնատիպ շարադրմամբ:

Այսպիսով, ջրային կառույցների վերաբերյալ հիշատակություններ արձանագրելը հայտնի է դեռեւս ուրարտական դարաշրջանից, որն առավել ընդհանրական է դառնում միջնադարում: Արձանագրություններում ամրագրվում էին ոչ միայն ջրաշինական աշխատանքները, այլեւ դրանց օգտագործման, նվիրատվության, ջրահարկի գանձման կամ ազատման գործառույթները:

Վաղուց ի վեր Հայաստանի ջրաշինության վերաբերյալ ուսումնասիրությունները եղել են պատմաբանների, վիմագրագետների, ինչպես նաեւ հայագիտությամբ զբաղվողների ուշադրության կենտրոնում, հետազոտվել է սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող մատենագրական ու վիմագրական ժառանգությունը, ի հայտ են եկել Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական, մշակութային, կենցաղային (այդ թվում՝ ջրօգտագործման) մի շարք խնդիրներ, որոնք պարզաբանման կարիք ունեն:

Ջրաշինության վերաբերյալ ուսումնասիրությունները շարունակում են մնալ հայագիտությամբ զբաղվողների ուշադրության կենտրոնում, որոնց կատարած հետազոտություններով պարզաբանվում են Հին Հայաստանի ընկերային-տնտեսական եւ մշակութային կյանքի մի շարք խնդիրներ:

32 «Դիվան», պրակ IV, էջ 148, արձ. 601: